

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 11/2

7 մարտի 2017թ.

Քննարկվեց «Դավ-Մուր» ՍՊԸ գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ 12.01.2017թ. թիվ 1011434 ակտի դեմ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 28.11.2016թ. թիվ 1011434 հանձնարարագրի համաձայն «Դավ-Մուր» ՍՊԸ-ում (այսուհետ նաև՝ ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ 12.01.2017թ. թիվ 1011434 ակտը, որով շահութահարկի և ավելացված արժեքի հարկի գծով առաջադրվել են պարտավորություններ՝ ընդհանուր գումարով 39.487.961 դրամի չափով:

Նշվեց նաև, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչությունում քննվում է «Դավ-Մուր» ՍՊԸ-ի վերաբերյալ հարուցված թիվ 83154017 քրեական գործը, որի շրջանակներում ընկերության կողմից ներկայացվել են ստուգման ժամանակաշրջանում կատարված ծախսերը հիմնավորող լրացուցիչ փաստաթղթեր, սակայն վերջիններիս իրավաչափության հանգամանքը դեռևս հնարավոր չի եղել պարզել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ գանգատի վերաբերյալ իրավաչափ որոշում կայացնելու համար գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման, մինչև լրացուցիչ ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

«Դավ-Մուր» ՍՊԸ գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ